

Կարծիք

Անուշ Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հովհաննես Ղուկասյանը խորհրդահայ արձակում, անտարակույս, ունի իր վաստակը, իր «սունն ու տեղը» և վաղուց ավելին ժամանակն էր անդրադառնալու նրա ժառանգությանը, ներկայացնելու այն որպես կայացած համակարգ, ինչին էլ ձեռնամուխ է եղել Անուշ Ստեփանյանը «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսության մեջ:

Արդիակա՞ն է, արդյոք, հայցորդի հնչեցրած թեման: Պատասխանը միանշանակ դրական է, որովհետև ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ժամանակաշրջանի գրական զարգացումների համապատկերում հետևել զրոյի առաջընթացի դինամիկային, բացահայտել աշխարհայեցողության նրա կերպը, անհատի ու ժամանակի, անհատի ու հասարակության, ժամանակի ու տարածության միասնականության (քրոնտոպ) վերաբերյալ նրա պատկերացումները:

Ո՞րն է ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսը լավատեղյակ է Հովհ. Ղուկասյանի ստեղծագործության վերաբերյալ մամուլում առկա հոդվածներին, դիտարկումներին, նաև առանձին գրականագետների (Ս. Աղարաբյան, Ս. Արզումանյան, Ստ. Թոփչյան և այլք) ուսումնասիրություններում վերլուծված թուոցիկ ակնարկումներին, որոնք, սակայն, ամբողջությամբ չեն անդրադառնում Հովհ. Ղուկասյանին, չեն բացահայտում նրա կերպակերտման, պատկերավորման յուրահատկությունները:

Այս առումով Ա. Ստեփանյանի ուսումնասիրությունն, առաջին, կարող եմ ասել, հաջողված փորձն է ինչ-որ չափով մարելու գրականագիտական մտքի՝ զրոյին ունեցած պարտքը:

Այնուհետև կարևոր է՝ ուսումնասիրությունը պաշտպանությունից հետո կմնա ու կիոշութիւն գրադարաններում, թե ունի նաև կիրառական, գործնական նշանակություն:

Համոզված ենք, որ այս ատենախոսությունը ճանաչողական նշանակություն ունեցող թեմա կարող է հանդիսանալ (օրինակ՝ «Հովհաննես Ղուկասյանը պատմավիպասան», «Հովհ. Ղուկասյանի մանկապատանեկան արձակը») մասնագիտական ֆակուլտետների մագիստրոսական դասընթացներում:

Այնուհետև, թեկնածուական ատենախոսության գործնական, տեսական ուսումնասիրության համար խիստ կարևոր է, թե հեղինակ ինչ նպատակ է հետապնդում, ինչ խնդիրներ է դնում իր առջև և, որ ավելի կարևոր է, ինչպես է լուծում այդ խնդիրները:

Ատենախոսության նպատակը պարզ է՝ Հովի. Ղուկասյանի ստեղծագործությունը ներկայացնել որպես կայացած համակարգ, խնդիրներն ածանցվում են նպատակից՝

1. Հովհաննես Ղուկասյանի բազմաժանր ստեղծագործությունը ներկայացնել որպես միմյանց հետ սերտորեն փոխկապակցված շղթա:

2. Բացահայտել տարբեր ժանրերի պոետիկայի առանձնահատկությունները:

Այնուհանդերձ, Անուշ Ստեփանյանը կարողացել է յուրովի լուծել առաջադրված խնդիրները, հանգել ինքնուրույն եզրահանգումների: Ճիշտ է, նրա եզրակացություններից մի քանիսը կարելի է վիճարկել, ինչը, սակայն, մեր կարծիքով դրական պետք է համարել՝ նկատի ունենալով գիտության մեջ առաջին քայլերն անող ուսումնասիրողի ինքնուրույնությունը, սեփական կարծիք ունենալու և այն հիմնավորելու ձգումը:

Ավելացնենք, որ աշխատանքը գրված է գրականագիտական պատշաճ մակարդակով, գիտական բարեխղճությամբ, զերծ է ավելորդ գունազարդումներից, հեղինակի ստեղծագործության նկատմամբ ունեցած սիրային զեղումներից:

Այժմ մի քանի դիտարկումներ, որոնք աշխատանքն ավելի ամփոփ, համակարգված տեսնելու ցանկությամբ են պայմանավորված:

1. Ներածության մեջ (Էջ 10) ատենախոսը նշում է. «աշխատության մեջ առաջին անգամ քննվում է գրողի ստեղծագործության յուրաքանչյուր ժանրի ստեղծագործություն առանձին-առանձին, ամենայն մանրամասնությամբ»:

9-րդ էջում նշվում է. «Ուսումնասիրության գլխավոր խնդիրն է վեր հանել ոչ միայն Ղուկասյանի ստեղծագործությունն իր ամբողջության մեջ, այլև ներկայացնել տարբեր ժանրերի մեջ հեղինակի ստեղծագործության դրսորումներ, բացահայտել յուրաքանչյուր ժանրի մեջ նրա ստեղծագործության դերն ու նշանակությունը, քանի որ բազմաժանր հեղինակի համապարփակ պատկերը երևում է նրա ամբողջ ստեղծագործության մեջ»: Ոճական անհարթությունը թողնենք մի կողմ (ծավալուն նախադասության մեջ «մեջ» բառը կրկնվում է 4 անգամ, 4 անգամ նաև «ստեղծագործություն» բառը):

Կարծում ենք ավելի նպատակահարմար կիներ յուրաքանչյուր ժանրի ներսում ստեղծագործությունները համախմբել թեմատիկ- գաղափարական առանցքների շուրջ, քան «յուրաքանչյուր ժանրի ստեղծագործություն քննել առանձին- առանձին, ամենայն մանրամասնությամբ»:

2. Կան ևս մի շարք անհարթություններ՝

ա) «Մանրամասն վերլուծվել են «Փոքրիկ վրիժառուները», «Հասանի հիշատակարանը» վիպակները թե՛ կերպարային, թե՛ գաղափարական կողմերով»: (Էջ 8)

բ) «Հովհաննես Ղուկասյանի կենսագրությանն ու նրա ստեղծագործություններին նվիրված հոդվածների շարքն առանձնացված է «Հայ գրականության» սովետական շրջանին ուղղված կենսամատենագիտական շարքում»:(էջ 3)

գ) «Ուսումնասիրության նպատակն ուխնդիրները առանձնացնելով կարելի է ասել, որ ուսումնասիրության առարկան Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունն է»:(էջ 9)

դ) «Տեսական- մեթոդական հիմքը ներկայացնելով՝ հաշվի ենք առել այն իրողությունը, որ Հ. Ղուկասյանի ստեղծագործությունն ընդհանուր առմամբ ուսումնասիրված չէ»:(էջ 11)

3. Առկա են նաև մի քանի համակարգչային վրիհակներ:

Եզրակացություն.- Անուշ Ստեփանյանի աշխատանքը գրված է գրականագիտական պատշաճ մակարդակով, քննարկվող նյութի խոր իմացությամբ, գիտական բարեխողությամբ: Արված դիտողությունները խմբագրական բնույթի են և չեն արժեզրկում աշխատանքը, որը լիովին բավարարում է թեկնածուական առենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հայցորդն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

05.11.2020թ.

Մարտին Գիլավյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պրոֆեսոր Մ. Գիլավյանի ստորագրությունը հաստատում եմ ՀՍԴ բանասիրական ֆակուլտետի դեկան, գ. թ., դոցենտ Ա. Գալստյան

